

առանձին իմն հայրական հոգածութեան ապացոյց կա-
թողիկոսութեան յարածների մասին. ժողովը պէտք էր,
որպէս թէ, հրապուրէր դէպի պապը Հռովմից անջատ-
ուած արեւելեան եկեղեցիները մանաւանդ յունականը,
Դարձը վարձատրելու համար առատ խոստումն է անում.
այն է. յոյները կը վերստանան հին փառքը, իրանց իրա-
ւունքները, իրանց ազատութիւնը:

Թերզեանի հրաժարեցումն.

ՀԱՅ-ՀՌՈՄԷԱԿԱՆ ԸՆԴՀ. ժողովը անցեալ շաբթու լիա-
զումար նիստի մը մէջ միաձայնութեամբ հրաժարեցուց Թէրզեան
Պատրիարքը, այն եղբակացութեան դաշտով թէ քանի որ անիկա
ոչ միայն նոր կանոնադիրը ազդին զգացման համապատասխան
կերպով կազմելու կողմը չէ, այլ եւ արդէն դոյութիւն ունեցող
կանոնադիրը չի ճանչնար, եւ փոխանորդ ու գործակատար
կանուանէ ուղղակի՝ արհամարելով ամեն կանոն եւ պատշաճու-
թիւն, իրաւունք չունի Ազգին ներկայացուցիչն ըլլալու:

Օ Տ Ա Ր Ե Կ Ե Ղ Ե Յ Ի

ՊՐԱՒՈՍԼԱՒ ԵԿԵՂԵՅԻ

(Церк. Вѣст. № 40.)

Սիրիի համար քահանայացուների պատրաստութիւն.

Եկեղեցական դպրոցների ուսուցիչներից Սիրիի թե-
մերի ազգաբնակչութեան համար քահանայացուներ պատ-
րաստելու դասընթացքները, որ բացուած էին Սրբ. Սինօդի
1909 թուի օգոստոսի 5—12 որոշմամբ, նոյն Սինօդը որոշել
է մի տարի եւ շարունակել նոր ընթացաւարտներ եւ տա-
լու համար, պայմանով, որ դասընթացքը լինի վեցամսեայ:

Եկեղ. ծխ. դպրոցների ուսուցիչների համար առողջա-
պահական քնակավայր Խրիմում.

1909 թուին եկեղեց. ծխ. դպրոցների 25-ամեակի
առիթով, ի յիշատակ ի Տէր հանգուցեալ Թագաւոր կայսր

Ալէքսանդր Գ.-ի, որ վերահաստատել էր այդ գպրոցները, յիշեալ դ. քրոցների ուսուցիչների համար, Սինօդը հաստատել է Խրիմում առողջապահական բնակավայր կառուցանելու ծրագիրը, շէնքը երեք յարկանի պէտք է լինի, առաջը պարտէզ, Գետինը վարձով առնուած է կոմսուհի Վորոնցովա-Դաշկովայի Ալուպկա կալուածքում գէպի Սիմէիզ տանող ճանապարհի վերայ, Շէնքը 142,000 ռուբլի կընստի և արտաքուստ պատրաստ պէտք է լինի մինչև 1912 թուի նոյեմբերի 1-ը, և աւարտուած ու բոլորովին պատրաստ պէտք է յանձնուի շինարարական յանձնաժողովին 1913 թուի յունվարի 1-ին:

Քրիստոնէայ Զգասների տօն.

Սեպտեմբերի 29-ին Պետերբուրգում տօնուել է արքեպիսկոպիտան գէմ մաքառող Քրիստոնէայ Զգաստների տօնը: Առաջին անգամն է, որ արքեպիսկոպիտան գէմ մաքառող Զգաստները այսպէս հանդիսաւոր տօն են կատարում: Արքեպիսկոպիտան վնասակարութեան համար առաջուց պատրաստուած էր 100 հազար օրինակ տետրակ, որից նոյն օրը վաճառուեց 80 հազար օրինակ: Տօնի համար եղած ծախքերը դուրս գալուց յետոյ հանգանակուած գումարի մնացորդը կը գործադրուի բանւորների ու անգամալոյծների գաւակների կրթութեան, ժողովրդական դաստիարակութիւններ կազմելու ևլն. համար:

Կիեւի թեմի հոգեւորականութեան պատրաստութիւնը

Զորքող Դումայի ընտրութիւնների համար.

Կիեւում իննովկենտիս եպիսկոպոսի նախագահութեամբ տեղի է ունեցել հովուական ժողով, որին մասնակցել են Կիեւի թեմի 70 բարեկարգիչները, և քաղաքային հոգևորականութեան ներկայացուցիչները: Միաձայն որոշել են առաջիկայ Զորքող Դումայի ընտրութեան ժամանակ միանալ ծախակողմեանների գէմ մաքառելու համար համաձայնութեան գալ ազգայնական կուսակցութեան հետ:

Սրբ. Սինոդի որոշումն Պրատսլա եկեղեցուց անջատւածներին նորից ընդունելու մասին: (Церк. Вѣст. № 43)

Սինոդը գտել է, 1. նրանք որ անջատուել են պրատսլա եկեղեցու թիւնից եկեղեցուց թոյլ չտրուած պատկի կամ այլ անարժան շարժառիթներով, կարող են վերստին ընդունուել եկեղեցու մէջ թեմական առաջնորդի յատուկ թոյլտուութեամբ որպէս անհատական դէպք. խորապէս համադուելով դարձողի անկեղծ զղջմանը եպիսկոպոսը կարող է կրճատել այդպիսիներին սահմանուած կանոնական ապաշխարանքը, և 2, յիշեալ անձերի պատկները, որ կատարուած են այն ժամանակ, երբ նրանք օտար դաւանութեան էին պատկանում, և պրատսլա եկեղեցու կանոններով ապօրէն են համարուում, թեմական առաջնորդները պէտքէ որոշեն այդպիսի պատկների ոյժն ու իրական լինելը պատկուածներից մէկի պրատսլա եկեղեցուն դիմելուց յետոյ և իրանց եղբակացութիւնը այս հարցի առիթով իւրաքանչիւր դէպքի ժամանակ ներկայացնեն Սրբ. Սինոդի բարեհայեցողութեանը:

ՌՈՒՍ ՀԵՐՁՈՒԱԾՆԵՐ

Պետերբուրգի հնածէսները, ասում է «Церк. Вѣст.» (№ 39), որոնք ընդունում են քահանայութիւն, միջնորդութիւն են յարուցել, որ Մոսկվայի Ս. Խաչի եղբայրութեան նման իրանց համար հնածէսների եղբայրութեան կանոնադրութիւն հաստատուի: Բացի սրանից Պետերբուրգի հնածէսների մէջ հակառակ հոսանք է սկսուել ընդդէմ հոգևոր խորհրդի, որը թեմական եպիսկոպոսից յետոյ բարձր ատեան է համարուում:

Հնածէսների ժողով Մոսկվայում (Церк. Вѣст. № 40).

Ներքին գործերի նախարարութիւնը թոյլ է տուել այն հնածէսներին, որոնք քահանայութիւն ընդունում են, բայց չըջարեւական թղթեր ոչ, Մոսկվայում հոկտեմբերի 9—12-ը ժողով գումարել:

ՀՈՌՎՄԷԱԿԱՆ ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Ներքին գործերի նախարարութեան բացատրութիւնը տօնօրէի համար Հռովմի Կաւիայի դերեկսի առիթով.

Նորերումս հրատարակուած Հռովմի Կաւիայի «Motu proprio de diebus festis» դեկրետով, առում է Լերք. ԲԵՐԷ.—ը (№ 38), սահմանուած է, որ եկեղեցական բոլոր տօները, բացառութեամբ ութի, ի դէպս, եթէ նրանք հանգիպելու լինեն հասարակ օրերում, փոխադրուեն մերձաւոր կիւրակէ օրը, այսպիսով տօների համար առաջուայ կարգը այս դեկրետով խախտուում է. Մինչդեռ Հռովմէական կաթոլիկ եկեղեցիների տօնակատարութեան համար այսպիսի կարգադրութիւնը հակասում է Ռուսաստանի քաղաքական օրէնքներին (տես 1897 թ. Պետական Խորհրդի Բարձր. հաստատուած կարծիքը և Նախարարների խորհրդի 1900 թ. յունվարի 22-ին Բարձրագոյն հաստատուած կարգադրութիւն Պրիվիլեյինսկի երկրի նահանգների համար. Նախարարների ժողովի 1881 թուի մայիսի 15-ին և 1903 թուի դեկտեմբերի 13-ին Բարձրագոյն հաստատուած կանոնադրութիւն), որոնք սահմանում են կաթոլիկական մի քանի տօների կատարումն, որոնց մէջ են և դեկրետով փոփոխուած Տեառնդառաջի և Աւետման տօները, Զարչարանաց շաբթի ուրբաթն ու շաբաթը, Զատիկի երկրորդ օրը, Հոգեգալստեան օրերը, Աստուածածնի ծնունդը, նոյնպէս և դեկտեմբերի 24 և 26-ը:

Ի նկատ առնելով, որ այսպիսով յիշուած դեկրետը չի համապատասխանում կիրառութեան մէջ եղած օրէնադրութեանը, ներքին Գործերի Նախարարութիւնը հնարաւոր չգտաւ հայցել Բարձրագոյն բարեհաճութիւն յիշեալ դեկրետը յանձնելու հռովմէական կաթոլիկ թեմերի առաջնորդներին, որոնք նախազգուշութիւն ստացան, որ դեկրետը չի կարող հրատարակուել ու գործադրուել:

Հոռովմէական կաթոլիկ եկեղեցում *սօների* *սեղափոխու-*
թեան առիթով *Россія* (Հոկտմ. 28) լրագիրը գրում է.

Ներքին գործոց նախարարութիւն են մտել մի կարգ յայ-
տարարութիւններ հոռովմէական կաթոլիկների զանազան թե-
մերի առաջնորդներէ՝ որոնք հաւաստիացնում են թէ Հոռովմի
կուրիայի նոր ժամանակներումս հրատարակած «*Motu proprio de*
diebus festis» դեկրետը, որ չէ վաւերացել ռուս կառավարու-
թիւնից, կայսրութեան մէջ գործադրուող օրէնքներին չհամա-
պատասխանելուն պատճառով, տեղական կաթոլիկների մէջ
տարակուսութիւններ է առաջ բերել: Ընդ սմին հոռովմէական
կաթոլիկ առաջնորդները յայտնել են, որ անհնարին է յիշեալ
դեկրետը կիրառութեան ընդունել Ռուսաստանում, հաւաս-
տիացնելով, թէ կաթոլիկ ազգաբնակչութիւնը՝ մշտապէս ջեր-
մեռանդութեամբ յարգել է պապի նոր արարքով փոփոխած
եկեղեցական կարևորագոյն տօները և թէ, այդ տօների փոփո-
խութիւնը կարող կլինէին շահագործել եկեղեցուն թշնամի
մարդիկ իրանց նպատակի համար:

Իտալացի հոգեւորականութիւնը Թուրք-Իտալական պատերազմի առիթով.

Իտալիան Ափրիկայում Տրիպօլիսին գրաւելու համար
այժմ պատերազմում է Թուրքիայի հետ: Իտալացի կա-
թոլիկ հոգևորականութիւնը ոչ միայն համակիր է Իտա-
լիային, այլ և օրհնում է այդ պատերազմը որպէս նոր
Խաչակրաց արշաւանք քրիստոնէութեան թշնամու դէմ.
պատերազմը հռչակում է որպէս քրիստոնէական քաղա-
քակրթութեան յաղթանակ, Մինչդեռ պատերազմը մղում է
միմիայն աշխարհակալական ցանկութեամբ և իտալացիները
պատերազմական գերիներին Սիրակուզա փոխադրելով
նրանց սիրտը շահելու և առհասարակ Տրիպօլիսի մահմետա-
կաններին հրապուրելու համար Սիրակուզայի կաթոլիկական
մի եկեղեցի ժամանակաւոր մզկիթ են դարձրել, և մու-
սուլմաններին չգրգռելու համար եկեղեցու քրիստոնէա-
կան պատկերները ծածկել են կրի ծեփով: Церк. Вѣст.
№ 43. Ի դէպ նկատում է թէ իտալացի քաջերը, որ իրանց
անյաջողութեան համար Տրիպօլիսում գնտակահար են անում

գիրիններին դրանց թւում և կանանց ու երեխաներին, քրիստոնէական քաղաքակրթութեան ռազմիրայ լինելու դերում բոլորովին անպէտք են:

ԱՆԴԼԻԱԿԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԵԿԵՂԵՅԻ

Անգլիական եկեղեցական համաժողով Սոփում.

(Церк. Вѣст. № 43.)

Անգլիայում իւրաքանչիւր տարի գումարուող այս եկեղեցական համաժողովը (կօնգրէս) անգլիական պետական եկեղեցու համար համարւում է խոշոր իրողութիւն: Այս ազատ ժողովներում անգլիական եկեղեցու ներկայացուցիչ եպիսկոպոսները, քահանաները և զանազան ուղղութեան աշխարհականները քննում են եկեղեցու ժամանակակից կեանքի նշանաւոր երևոյթները աւելի բազմակողմանի կերպով, որ անհնարին կը լինէր պաշտօնական ժողովներում անել, ժողովների զեկուցումները, որ շատ խրատական են, բռնում են ամենամեծ լրագրների տասնեակ երեսներ:

Այս տարի համաժողովը տեղի է ունեցել հօկտեմբերի 3-6. Ն. տ. Լիչֆելդի թեմի Ստոկ քաղաքում, որ Անգլիայի արգիւնաբերական կենդրոններից մէկն է: Խօսուել է ընդհանրապէս մշակ գասակարգի մասին, և թէ եկեղեցին ինչո՞ւ քիչ ազդեցութիւն ունի այդ գասակարգի դործերում: Զանազան բովանդակութեամբ զեկուցումներ են կարդացուել կրօնական ուղղութեամբ, և միջի այլոց՝ շեշտուել են—Ուէլսում եկեղեցին պետութիւնից բաժանելու, եպիսկոպոսների թիւը շատացնելու, մեծ թեմերը ստորաբաժանումների ենթարկելու, Ս. Գրքի անգլիերէն թարգմանութեան, Սուրբ Գրքի քննութեան հետեանքի, միջազգային խաղաղութեան վերաբերութեամբ եկեղեցու պարտքի, միջնակարգ և ստորին դպրոցների ուսուցիչների համար կրօնական դաստիարակութեան բարձրացնելու խընդիրները:

Բացի համաժողովի նիստերից կազմուել է եկեղեցական ցուցահանգէս, որը պատկերացնում էր եկեղեցական վաստակների զարգացումն, ի մասնաւորի, նոյն տեղի կրօնական գեղարուեստի զարգացումն:

ԲՈՂՈՒՄԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Բեժորմասների երկու ժողովները (Церк. Бѣст. № 39).

Այս տարի սեպտեմբ. 7—8 (ն. տ.) Պրագայում տեղի է ունեցել «Պրեսֆիտերեան» ձևի բեֆորմատ եկեղեցիների դաշնակցութեան համաշխարհային ժողովը: Այդ դաշնակցութեան մէջ 30 միլիօնից աւելի անդամներ են հաշուում, ժողովներում կարգացուել են բազմաթիւ տեսութիւններ:

Համաժողովի իսկական նպատակը եղել է ընտրել միջազգային մասնաժողով, 1915 թուին Հուսի նահատակութեան 500 ամեայ յօբելեանը տօնելու համար պատրաստութիւն տեսնել: Համաժողովը փորձ է արել համախմբել միասին չեխ, լեհ, ռուս, բուլղար և սերբ բողոքականներին:

Օգոստոսի 20—24 (ն. տ.) Գետաօլ'դում տեղի է ունեցել գերման բեֆորմատների միութեան 14-րդ ժողովը: Ժողովի բացումից առաջ կազմուել են դաւաճածացներ, որոնց մէջ Հալլէի Պրիվատ-դոցենտ Գեօտերսը Կալվինի ծննդեան 400-ամեակի առիթով դրուածքների տեսութիւնն ու գնահատութիւնն է արել: Խօսուել է նաեւ շվէյցարական բեֆորմատօր Յիլնդլիի մասին: Գեօտերսը ներբողել է Յիլնդլի-ին որպէս բեֆորմատօր աստուածաբան, դասախօսներից ոմանք մի քանի կէտերում Կալուինին ու Յիլնդլի-ին բարձր են համարել Լուտերից:

Բրեսլաւի պրոֆես. Բօշտէյնը իւր դասախօսութեան մէջ համարել է «Հին Կտակարանի կրօնը պատմական և կենսական ոյժ»:

Ժողովի որպէս եզրակացութիւն՝ կատարուել է գերման բեֆորմատ եկեղեցու կառավարչի (ժօտերաւտօրի) ընտրութիւն և ընտրուել է սուպեր-ինտենդենտ Կալամենը:

Պրուսիայում եկեղեցիների 1910 թուի ծախքը պետական հաշուից. (Церк. Вѣст. № 39.)

Սովորական ծախքերն են.

ա. եկեղեցիների շինութեան ու պահպանութեան, դպրոցների համար և եկեղեցական համայնքին և հոգևոր անձանց նպատակ 4,536,308 մարկ.

բ. Աւետարանական եկեղեցու ծայրագոյն խորհրդի համար 238,805 մարկ.

գ. Աւետարանական կոնսիստորիայի համար 1,793,040 մ.

դ. Աւետարանական հոգևորականութեան համար. (ռոճիկ, յաւելուած, կենսաթոշակ և լն.) 23,358,633 մարկ.

ե. Եպիսկոպոսարաններին և եպիսկոպոսական հաստատութիւններին 2,018,986 մարկ.

զ. Կաթոլիկ հոգևորականութեան և եկեղեցիների համար 7,409,348 մարկ.

է. Հին կաթոլիկ հոգևորականութեան և եկեղեցիների համար 48,000 մարկ.

Միանուագ և արտակարգ ծախք եկեղեցական և դպրոցական շինութիւնների համար, եկեղեցական համայնքներին և լն. նպատակ 1,292,300 մարկ.

Աւեստրալական-լուսեռական XIII բնդհանուր ժողովը.

(Церк. Вѣст. № 41)

Օգոստոսի 28-31. ն. ա. Շվեյցիայի Ուպսալում տեղի է ունեցել աւետարանական-լուսեռականների XIII. ընդհանուր ժողովը, այսինքն բոլոր աշխարհների լուսեռականների ժողովը, որ գումարուում է երեք տարին մի անգամ: Մասնակցողների թիւը 700-ի էր հասնում, որոնց կէսի չափը շվեդացիներ, իսկ մնացեալը Գերմանիայի, Նորվեգիայի, Դանիայի, Ֆրլանդիայի, Հիւսիսային Ամերիկայի, Ֆրանսիայի լուսեռական եկեղեցիների ներկայացուցիչներն էին. մասնակցում էին Պրուսիայի բողոքական եկեղեցու ներկայացուցիչներն էլ, որոնց, որպէս ունիատների, մինչև 1908 թ. Հաննովերի համաժողովը (կոն-

ֆերինցիա), թոյլ չէր տրուում մասնակցել լուսերականներին համաժողովներին: Ժողովին նախագահում էր Լէյպցիգի համալսարանի պրոֆեսոր Իմելսը, երկրորդ նախագահն էր Շվեդական եպիսկոպոս Շէելէ (Վիսթից):

Ամենալուրջ տեսութիւնները (բեֆերատ) կարդացել են գերմանական պրոֆեսորները Ուպսալում, ինչպէս որ ընդհանրապէս լուսերական աստուածաբանութիւնը մշակուում է առաւելապէս գերմանացիներից: Պրոֆ. Գունցինգերը (Էրլանգենից) կարդացել է «Առանց եկեղեցու՝ չկայ անհատական քրիստոնէութիւն» բնաբանով հետաքրքիր դասախօսութիւն: Այս տեսութեան հակաճառութեան ժամանակ միւս հետորներն էլ կրկնել են, որ առանց եկեղեցու չկայ քրիստոնէութիւն, չկայ գիտութիւնների մէջ առաջադիմութիւն, չկայ և աստուածաբանութեան ուսումն, որովհետեւ, երբ իւրաքանչիւր մարդ թողնուի իւր կամքին, պարտաւոր կը լինի աշխատանքը սկզբից սկսել: Ուպսալի պրոֆեսոր Բիլլինգը յայտնել է կրօնական-հայրենասիրական բնաւորութիւն ունեցող այն շարժման մասին, որ ծաւալուած է Ուպսալի ուսանողների մէջ առ շվեդական եկեղեցին, որին, որպէս առաջգային հաստատութիւն՝ ուսանողները վերաբերում են խորին յարգանքով և հետաքրքրութեամբ:

Նիստի վերջին օրը, նուիրուած էր սեկցիաների աշխատանքին: Նիւթերը նրանց մէջ բաժանուած էին հետեւեալ ձևով.

1. արտաքին միասիա, 2. ներքին միասիա, 3. աւետարանական բողոքական դիասպորա, 4. աւետարանական բողոքական միասիա հրէաների միջև Արևելքում և 5. միջազգային յարաբերութիւն:

Համաժողովի անդամները հեռացել են շատ բաւական շվեդացիների հիւրասիրութիւնից և սրտագին ընդունելութիւնից, այն գիտակցութեամբ, թէ լուսերական դաւանութեան անդամների կապը, համաժողովից յետոյ, աւելի ևս ամրապնդուել է:

Ներքին միասիայի ԼԶ. համաժողովը (Церк. Вѣст. № 41)

Սեպտեմբերի 25-27-ին Ն. տ. Շտետինում տեղի է ունեցել ներքին միասիայի ԼԶ. համաժողովը. ներքին միասիա անունով հասկացում է գերման բողոքականութեան մէջ այն աշխատանքը, որի նպատակն է ժողովրդի կեանքից հեռացնել ոչ-քրիստոնէական և հակաքրիստոնէական ուժերը, և ներմուծելը նրա մէջ աւետարանի հոգին, որ արտայայտում է առ մերձաւորն սիրոյ գործողութիւնների զանազան ձևերով, օրինակ, մանուկների, աղքատների, հիւանդների, անպատասպարներ իւր. մասին հոգածութեամբ: Այս գործը կազմակերպուած է որպէս ազատ ձեռնարկութիւն, և եկեղեցական պաշտօնական բնոյթ չունի: Կարգացուել են մի քանի տեսութիւններ, վերջապէս չորրորդ ատենախօս պրօֆ. Կիւլիա-ն նիւթ է առել միասիայի գործիչների յարաբերութիւնը դէպի «քրիստոնէութեան ու եկեղեցու դէմ» հրապարակական պայքարի կռիւր:

Ամենից առաջ ի նկատի ունելով մօնիստների և սօցիալ դեմօկրատների յարձակումները, ատենախօսը խըստօրէն դատապարտել է նոր աստուածաբանութեան (եւատօ) ներկայացուցիչներին, որոնք, նրա կարծիքով, ազաւաղում են քրիստոնէութեան էութիւնը. կտրուկ հարց. դրեց, թէ քրիստոնէութիւնը կարճը է դեռ եկեղեցական յարաբերութեան մէջ մնալ այդպիսի հերետիկոսների հետ:

Վերջապէս, չնայելով բողոքականութեան մէջ զանազան ուղղութիւններին, նա գտնում էր ընդհանուր հիմք թշնամու դէմ՝ մաքառելու համար, և բացի կռուի հին միջոցներից նոր միջոցներ էլ ցոյց տուեց, այն է, սարքել երեկոյթներ կրօնական բնաբանով զրոյցների և ջատագովական ընթերցումների համար, գործի հրաւիրելով յատկապէս չնորհալի անդամներին և մամուլի ազդեցութիւնը:

Մօնիսների ա. համաժողովը (Որոշ. ՅԵՏ. № 41.)

Սեպտեմբերի 8-11-ը ն. տ. տեղի է ունեցել Համաբուրգում գերման Մօնիսների ա. ժողովը, որին ներկայ է եղել 800 մարդ։ Համաժողովի նախագահ պրօֆ. Օստվալդը փակեց ժողովը հետևեալ խօսքերով. «ես փակում եմ Մօնիսների առաջին ժողովը և բաց եմ անում մօնիստական դարը»։ Համաժողովում վճռուել է հաստատել միջազգային մօնիստական կազմակերպութիւն, և յանձնարարուած է Համբուրգի մօնիստներին այս բանով զբաղուել։

ՄԱՀՄԵՏԱԿԱՆՆՈՒԹԻՒՆ.

Իսլամագիսուքեան դասընթացներ (Որոշ. ՅԵՏ. № 41.)

Ներքին գործերի նախարարութիւնը հոգեւոր գործերի դեպարտամենտի գլխեկտօր Հոֆմեյստր Խարուզինի նախաձեռնութեամբ իսլամագիտութեան դասընթացքներ է հաստատել։ Դասընթացքի նպատակն է պետական ծառայութեան մէջ եղածներին պատրաստել գործելու մահմետականաբնակ վայրերում, որպէս ծանօթներ մահմետականների լեզուին, նիստ ու կացին և մուսուլմանական կեանքի կրօնական պայմաններին. որովհետեւ փորձը ցոյց է տուել, որ այն վարչական հաստատութիւնները, որոնք հաղորդակցութեան մէջ են մուսուլմանների հետ, իրանց ձեռքի տակ չունենալով մուսուլմանների միջավայրում գործելու յատուկ պատրաստութիւն, մեծ մասամբ զրկուած են ոչ միայն իրանց կառավարած ազգաբնակչութիւնը ճանաչելուց, այլ մինչև անգամ բաւականաչափ տեղեկութիւն չունեն մուսուլման ազգաբնակչութեան առանձնաշատուկ կենցաղավարութեան մասին։ Դրա համար էլ դասընթացքի գլխաւոր նպատակը կը լինի ունկնդիրներին ծանօթացնել արաբ գասական լեզուի հետ (որ մահմետականների աստուածապաշտութեան լեզուն և ամբողջ մուսուլման աշխարհը միացնողն է), այնուհետև ծանօթացնել